

Նապոլէի կէտիւնմէ քտէ տիր, մէջ-
քիւր թէյէկրաֆտա, մէրգուսն զէվ-
ճէսի իլէ, Սիվաստաքի էվլատընըն
տախի իմզալարը պուլունմագտա տըր:

Գու թէյէկրաֆ, պուրատան, թէ-
յէկրաֆ իլէ, վուզուի հալ խապէր վի-
րիմիլ յաւուզուստան, գարլըլըք ճէ-
վապ օլարաք էվլաիլ տիր:

Թէյէկրաֆըն սուրէթի տիր

Ամենպատիւ Բարձրաշնորհ Սրբազան
Պատրիարք Հայր:

Այսօր հեռագրաւ իմացայ թէ՛ հայրս
աքսորանք հայրենիք զրկելու համար Այր-
բաղնոթիւնը իբր մեր կողմանէ գրուած
կեղծ նամակներ ներկայացուցեր են թըլ-
նամիք ունեք:

Մայրս և ծառանիւ երբէք հօրս այս-
պիսի անպատիւ կերպով զրկուիլը չեմք ու-
զած, ըսուածները բոլորն ալ զրպարտու-
թիւնք են: Ուստի կը խնդրեմք, որ թըլ-
նամակաց ըրած անհիմն ամբաստանութեանց
երբէք կարեւորութիւն չը տրուի, թէն
չեմք յուսար որ Աղգային Պատրիարքարա-
նը առանց պաշտօնական գրութեանց ու
տեղեկութեանց սխալ ձեռնարկութիւն
մը ըրած ըլլայ: Այլ սակայն եթէ սխալ-
մամբ այդպիսի վնասակար ձեռնարկութիւն
մը ըրած է, կ'աղաչեմք որ մինչեւ անգամ
Սամսոնէն կամ Սամսիայէն հեռագրաւ
յետս կոչելու բարձր շնորհն ընել հաճեք,
զի բարոյապէս ու ներթապէս մեծ կո-
րուստ ու վնաս պիտի կրեմք, որով պիտի
պարտաւորեմք թշնամիին ո՛վ որ ալ ըլլայ,
դատ բանալ, վնաս ու հատուցում պա-
հանելը, ուր որ անկ է:

7 սեպտ. 1878 Գալէի վարդապետ
Ս. Վարդապետ

Տէր:

Յանուս արդարութեան հետեւեալ ար-
դար բողոքագրոյ տեղի մը շնորհէք որոյ
վնաս կանխաւ շնորհակալու:

Թիւ 652, ծխալաճառ
Ի Բերա Գուլէ-գարու
Թիւ 652, ծխալաճառ

Պօսոյ մէջ 70 անձերէ բաղկացեալ քի-
լէնի էսնաֆ մը կայ, որ տէրութեան տա-
րեկան 90 հազար դահեկան տուրք մը կը
վճարեն. սոյն էսնաֆէն բաժանեալ վար-
քան հայրս՝ տասն ընկերակցօք զատ և առ-
ւանձին էսնաֆ մը հաստատելու և առ-
այդ տէրութեան տարեկան 90 հազար
դահեկան բացէն տուրք մը տալ խոստա-
նալով 2 1/2 տարիէ հետէ, տէրութեան
բոլոր պաշտօնարաններէ իւր խնդիրն ըն-
շտունուած՝ ի վերջոյ, տարիէն աւելի է,
խնդիրն չէ՛նք էմանէթին յանձնուած է
ի քննութիւն, ուր ցարդ կը մնայ:

Հայրս՝ խնդրոյն չափազանց երկարիւր
տեսնելով՝ խիտ առ խիտ բողոքներով Բ.
Իրան կը գանգատի. որոց վրայ անցեալ
ամսոյ 8ին ուղարկութեան առնուիլը տես-
նելով հօրս հակառակորդ էսնաֆը, քա-
նիցս աւելորդ և անտեղի պայմանաժա-
մեր կընդունի. յորում մի միայն հօրս սիր-
տը չափելով իր նպատակէն ետ կեցնելու
ջանքեր կ'ընէին. սակայն անկարելի ըլլա-
լով համոզում գոյացնել, ուստի հայրս
վարդապետիւր ետ կեցնելու նպատակաւ,
իրենց էսնաֆէն 2 անձինք՝ 2 անթա օղլու
և իւր ընկերը խրատելով, անցեալ ամսոյ
11ին, Ղալաթիա Թուրքիայի փողոցը, հօ-
րոս լուսացուած միջոցին, առանց սպառնա-
թի վրան յարձակելով՝ անխնայ ծեծելէ և
հակառակ տեղերէ պատռելէ զինի՝ ֆէսն
առած Պօսոյ Ուն-խաբանի կողմը իրենց
երկուստ պաշի Սէլիմ աղայի ըով կապատա-
նին:

Հայրս արեւնաթաթալ ուղղակի Շէնիւր
էմանէթին կը ներկայանայ, ցուցուելու
համար հակառակորդաց վստիկնի սպառ-
նալիքները, ուրիկց կը հրամայուի իրեն
ոստիկանութեան դիմել: Ղալաթիոյ ոս-
տիկանութեան կողմանէ եղած հաշտու-
թեան և մեր երկիցս մատուցած աղբրապարտու-
ղայ, քանիցս խիտ խո գարկութեանց
հակառակ՝ նաև Պօսոյ ոստիկանութեան
գրութիւլ՝ ցարդ ձեռք չ'առնան:

Հակառակորդաց այս կերպով իսկ չը յա-
ջողելով քանի մ'որ վերջ կ'ստիպեն իրենց
արհեստակից Հայրս, որպէս զի խնդրոյն
աղբային կերպարանք մը տալով թերեւ
կարեւան բան մ'ընել, ուստի քանի մը
անձինք Չըմըլաճաճկի Ալիքանեան Մատ-
թէոսի առաջնորդութեամբ, նախ փախազ-
եան Պ. Ստեփանի և Ղալաթիոսեան Պ. Բա-
րիստոսեանի կը ներկայանան որոյ հրա-

հանգին համեմատ՝ չը գիտցուիր ինչ
խոստումներով Պատրիարքարան կը դիմեն
խնդրագրով մը, որպէս զի հայրս համա-
զեղով ետ կեցուեն նպատակէն: Խորհրդ-
դական Արաքանն ալ Պատրիարքարանի
մէջ ալ պաշտօնեայ չը գտնելով՝ խնդիրը
Փափագեանի և Գրիստոսեանի կը յանձնէ
որք առաջին անգամն ըլլալով՝ էսնաֆի
կողմանէ 70 հարկերնոց խալմէ թղթերու
կապուք մը կը խոստանան հօրս՝ եթէ խըն-
դիրը թողով հայրենիք վերադառնայ,
նոյնպէս Պատրիարքարանէն կէս պաշտօնա-
պէս ծանուցուեցաւ մեզ մինչեւ 100 թըլ-
թերու հասցունելէ այդ կապուք, և կամ
հայրս առանց աշխատութեան մասնակցելու
մինչեւ ցմահ բաժին մ'առնուի ինչեալ էս-
նաֆէն եթէ հաճի նպատակէն ետ կենալ:
Բայց և այնպէս համազում չը կարենալով
գոյացնել, խնդիրը կը կերպարանալու
խեն, որպէս թէ երկիր գտնուող, բայց
հօրմէս բաժնուած երբորս կողմանէ, տա-
րի մ'առաջ մասնաւորապէս Պ. Գրիստոս-
տուրի գրուած անձնական նամակ մ'իմե-
սին, որ կը խնդրէ եղբր հայրս երկիր
զրկել, զայս փաստ բռնելով և քանի մ'օ-
տար ստորագրութեամբ օրինաւոր բողոք
մը կերպարանք տալով՝ Պատրիարքարանի կը
մատուցանեն. ուրիկց առանց քննութեան
և ընդգիմութեան, կը յաջողին հօրս հայ-
րենիք դարձը խնդրող Բ. Իրան ուղղեալ
թագրիր մը հանել:

Ասոր վրայ հայրս ոստիկանութեան
կողմանէ ձեռնարկուելով՝ « Երկրէն ուղ-
ւեր են, և անպատճառ առանց ժամանակ
անցունելու երկիր պիտի երթան » կը հը-
րամայուի: Հայրս կը հարցունէ թէ, « Երկ-
րէն զիս ուղղորդեր ո՞րք են, իմ զաւակներ
հօս, և ընտանիքս գտնուած մը չունի, նաև
տէրութեան հետ ալ չահաւոր գործ
ունի » մ. այս հարցման պատասխան չը տալէ
զատ խիտ սպառնալիքներ ալ կը տեղա-
ցընեն: Հայրս չափաւր հազիւ 8 օր պայ-
մանաժամ կը պահանջէ խորհելու և պէտք
եղած անցերը բողոքելու համար: Պայմա-
նաժամը կը տրուի: Հետեւեալ օրը հայրս
Բ. Իրան բողոքագրեր կը մատուցանէ,
ուրիկց վաւերացուելով, հօրս ձեռամբ մին
ուղղակի ոստիկանութեան կը զրկուի, իսկ
միւսը Շէնիւր էմանէթին, ուրիկց Բ. Իր-
ան հրամանի համեմատ՝ ոստիկանութեան
Բէյլերէ պիտի գրէր, հօրս տէրութեան
մօտ ունեցած խնդիրը ծանուցանող և յա-
նիրաւի հայրենիք դարձը յետաձգող:

Ջարմանայի և ցաւ է մեզ տեսնել, որ
8 օրէ հետէ հայրս անյայտացած և ամեն
կողմընտուելու հակառակ չը կարենալով
գտնել, խնդրագրով մը Պատրիարքարան
զիմելով, որ անորդ կերպով ծանուցուեցաւ
մեզ՝ թէ Պատրիարքարան երկարամեայ
պանդուխտ մը իրաւունք ունի եղբր հայ-
րենիք զրկել. ուստի հայրս ալ ոստիկա-
նութեան միջոցաւ հայրենիք զրկուած է:

Ահա՛ մեծ և արդար իրաւունք մը, ուր
16 տարիներէ հետէ հօրս անունն անգամ
չը յիշող, գէթ մի անգամ չը հարցնող և
չը ինտուզող պատրիարքարան մը կը գործէ,
միայն ներկայ ամսուան և անոր գործոց
յաջողութեանը միջոցին, նորա թշնամեաց
խօսքերով, առանց քննութեան և առանց
վարկաւոր հօրս և զաւակացը կողմանէ ի-
րեն դէմ ի գործ դրուելիք արդար բո-
ղոքներէ և պահանջումներէ . . . : Ահա
պատրիարքարան մը, ուր իւր մէկ աղ-
գայնոյն անձնական ազատութիւնը, նո-
րա երկուր ժամանակեայ տաժանելի աշ-
խատութեամբ ձեռք բերելիք իրաւունքը և
ընտանեկան խաղաղութիւնը Պ. Փափագ-
եանի և Պ. Գրիստոստուրի « Բախէ » հա-
մար և կամ աւելի ճիշդ խօսելով, նոյն
իսկ փախազեանին, Պատրիարքարանի մա-
սին ըսած կալուականութեամբ, օտարին
կը ծախէ . . .

Ինչպէս ակներեւ կը տեսնուի, հայրս
տարիներէ հետէ մի միայն սոյն գործոյն
եռեւէ, իր բոլոր ինչքը, արտ, տուն տեղ
և իւր կենսիկն իսկ բոլորովին տէրութեան
սոյն գործոյն զոհած՝ և այս առթիւ մե-
ծամեծ ծախքերու և վնասներու հանդի-
պած՝ և այն պարագաներու մէջ, յորում
իւր իւրեք ձեռք ձգելու բաղին պիտի
արժանանայ, և հայ հակառակորդացը
կողմանէ դրամական միջ ցնեցով ի վնաս
տէրութեան գանձուն՝ զանազան դժուա-
րութեանց կը հանդիպի, և ի վերջոյ Պատ-
րիարքարան ալ վաստակելով կը յաջողին
յանիրաւի աքսորել:

Մեծ զարմանք է տեսնել, որ հայրս
իւր խնդիրը տէրութեան որ պաշտօնա-
տանց որ մատուցած է, նա մասնաւոր
Բ. Իրան Հայրենասէր էֆէնդիներէ, իբր

տէրութեան և երկրին օգտակար անդամ
և գործ ամենայն խնդութեամբ և սիրով
նաև ձեռաց վրայ ընդունուած և գործն
ալ փութապէս կարգադրած են, ասոնց
հակառակ՝ եթէ թղթատուին Բ. Իրան
տեսները, պիտի տեսնուին թէ միայն այս
խնդրոյն առթիւ Շէնիւր էմանէթի վարան-
մանը դէմ հօրս կողմանէ որչափ անգամ
ներ բողոքագրեր մատուցուեր, ծանր հրա-
մաններ զրկուեր են, բայց ի շնորհս կողմ-
նակալութեան բոլորն ալ բարձի թողի ե-
ղած և առ ոյինչ ամաւորուած են: Եթէ
ձանձրոյթ չեն գդար Հայրենասէր էֆէն-
տիք, թող հրամայեն մեզ, պատրաստ եմք
մեր ձեռքը զընտուած թուահամարներովը
մի ըստ միովէ տեղն ի տեղն հրատարակել
ցուցունելու համար թէ Տէրութեան գան-
ձուն չուրջը գտնուող պաշտօնէից մէջ որ
աստիճան հոգ և խնամք կը տարուին ե-
ղեր: Տէրութեան ամաւորանովն ապրող այդ
էֆէնդիները թող թէ նորա մէկ շահա-
ւոր գործոյն պաշտպանը չեն հանդիսանա-
րենպէս հանդիսացան Բ. Իրան հաւատա-
րիմ պաշտօնեայք՝ այլ և զայն տապալելու
համար ալ տեղի կուտան հակառակորդ
էսնաֆին զանազան միջոցներով հայրս նը-
պատակէն չեղեցնելու:

Թող ցուցուի մեզ գէթ մէկ օրինակ
թէ՛ աշխարհիս վրայ գտնուած ո՛ր ազգաց
օրինաց մէջ լսուած և գործադրուած բան
է, որ պանդուխտ մը չունենալով ոչ ամ.
բաստանող, ոչ պարտապահանջ, ոչ վնա-
սակար գործ՝ միանգամայն տէրութեան և
երկրին օգտակար անդամ, ինչն երկրէն
տեղեկութիւն չ'ունենայ և ոչ թշնամեաց
խաղերով ամուսնոյն վերադարձը խնդրէ,
նոյնպէս իրենցմէ անբաժան զաւակները,
և միմիայն չորս տարի յառաջ գրուած
մասնաւոր մէկ նամակին յենով առանց
քննութեան և առանց եղած բողոքանաց
անսալու, ի վնաս տէրութեան գանձուն և
հօրս անձնական շահուն՝ անիրաւաբար աք-
սորանաց դատապարտել:

Շէնիւր էմանէթին և ոստիկանութեան
վերառեւոյթութիւնը օր և ժամանակ յառաջ
խնդրոյն իրազեկ ըլլալով՝ յանձնաք լոկ
Պատրիարքարանի վրայ ձգելով կրնան առ-
դարանալ: Հօրս Պօլիս մնալը թէ Տէրու-
թեան և թէ իր անձնական շահուց օգտա-
կար էր յոյժ, իսկ երկիր զրկուելուն մէջ
տեղ բացի վնասէ, մազիւ շարի օգուտ մը
կրնան ցոյց տալ, կրնան իբր Աստուած
ապահովել մեզ թէ՛ հայրս առանց տկա-
րութեան և այլ և այլ չարեաց հանդիպե-
լու, ողջ առողջ հայրենիք պիտի կրնայ
ժամանել, և անտի վերջապէս օր մը, վե-
րադառնալ ի Պօլիս, իւր դատը վարելու
և իրաւունքը ձեռք բերելու, միթէ իրա-
ւունք չ'ունիմ կասկածելու և բողոքելու,
թէ դուք թշնամիներէ կալուածելով անի-
րաւաբար ջանացիք աքսորել հայրս, ան-
գամ մը ևս Պօլիս չը վերադարձնելու նը-
պատակաւ:

Այ բողոքեմ Պատրիարքարանի անառ-
դարանալի անիրաւութեանը դէմ, որ առ-
անց խնդրոյն գէթ մի անգամ քննու-
թեան և հօրս երեսն իսկ տեսնելու, հա-
կառակ օրինալ թագրիր կը գրէ և աք-
սորանաց պատճառ կըլլայ:

Այ բողոքեմ ոստիկանութեան վերա-
ռեւոյթութեանը կողմնակալութեանը դէմ,
որ առանց հօրս վերոյիշեալ 2 բողոքագ-
րաց լսելու, նաև իմ 17 օր յառաջ թէրճէ-
մանը Շերք լրագրոյ թիւ 132 թերթի մէջ
այս առթիւ ուղղակի իրեն վերաբերեալ
բողոքագրիս նկատողութեան առնելու,
յանցանքը նախապատճառ եղող Շէնիւր է-
մանէթիի և Պատրիարքարանի վրայ ծան-
րացնելով չէ կարող արդարանալ, մինչ-
դեռ հայրս հոգ ցտնուած միջոցին, 2 շա-
բաթ առաջ մեր բողոքագրերը իւր ձեռքն
հասան, ինչո՞ւ ինչք օրինաւոր քննութիւն
չի բացաւ և կամ Պատրիարքարանի չի յանձ-
նեց:

Այ բողոքեմ այդ ի շնորհս կողմնակ-
ցութեանց և ի վնաս տէրութեան եղած
ամեն անիրաւութեանց և բռնաբարու-
թեանց դէմ, և հայրս կը պահանջում հայ-
րս, որուն ուր գտնուելն ալ ինձ կասկա-
ծելի է:

Տէրութեան շահուն դէմ և օրինաց
զանցառութեամբ գործադրուած սոյն առ-
նորինակ գեղմուտը, բարեխնամ կառա-
վարութեան արդարասէր ողբոյն զխոփն
հակառակ գոյով խոնարհաբար կը խնդ-
րեմ իւր հայրական դուրձը, և կը պա-
հանջում նախ հօրս ուր գտնուելուն պաշ-
տօնական լուրը, ապա արդար դատաս-
տան և քննութիւն ներկայ հրապարակա-

կան բողոքներովս, տէրութեան սնտուկին
վնաս հասցնող այն անհաւատարիմ պաշ-
տօնակալացը գէմ:

Թիւ 652, ծխալաճառ
13 սեպտ. 1878
Ի Բերա Գուլէ-գարու
Թիւ 652, ծխալաճառ

ԱԶԳԱՅԻՆ

Շու աթիտէքի իլանը, քէմալի
մէմուռնիյէթիւ տէրճ ու պէհան ի-
տէրիլ:

ԱԶԳ

Ասիական ընկերութիւնը որոյ նը-
պատակն է Հայաստանի դպրոցաց ձը-
րիարար դասագրքեր հայթայթել, ու
ընդած է կիւրակէ օրեր ուսումնասէր
աղգայնոց ազգասիրապէս դասախօսել
յօգուտ իւր վնեմ նպատակին որոյ
անթերի գործադրութեանը ընդ միշտ
հետամուտ է:

Ուստի ընկերութիւնն կը հրաւիրէ
բնիկ և պանդուխտ ուսումնասէր
աղգայինս, որ բարեհաճին հրամայել
կիւրակէ օր սեպտ. 24 ի Ս. Ներսիսեան
վարժարան Խասգիւղի, ուր պիտի ըս-
կըսուի աւանդուիլ նոցա, ժամը 6 էն
սկսեալ մինչ 9ը, հետեւեալ ուսումնա-
նեքը, ըստ հրահանգի Ուսումնական
խորհրդոյ Կեդրոնական վարչութեան.
Ա. Խորդ — Ընթերցանութիւն,
Դիր: Թուանշան ճանաչել ու գրել և
թուաբանական չորս գործողութիւնք,
Աղգային և Սրբապետ պատմութիւնք,
բերանացի կերպով:

Բ. Խորդ — Հայերէն, Աղգային և
Սրբապետ պատմութիւնք, գրաւոր
կերպիւ, թուաբանութիւն, սկզբունք
Տօմարակալութեան, ընդհանուր Աշ-
խարհագրութիւն, Տաճկերէն, Գաղ-
ղիարէն, Գեղարքութիւն Հայ. Տաճկ.
և Գաղ. լեզուաց, Կրօնական և աղ-
գային երգեր, Չայնագրութիւն:

Ի Դիմաց Ընդհ. Ժողովոյ
Ասիական Ընկերութեան
Ատենադպիր Ատենապետ
Լևոն Նաճեան Պօլիս Գ. Բէրքստէճեան

. . . Խմբագիր,
Յառաջիկայ կիւրակէ առաւօտ Ս.
Խաչի տօնին առթիւ Գեր. Յարութիւն
եպիսկոպոս Ենկիւրիւեան Թաղիս Ս.
Ենկերցիին Ս. անմահ Պատարագ պիտի
մատուցանէ հոգեւորապէս մխիթա-
րելով զժողովուրդը ազգու առեւա-
բանութեամբ, ուստի ի գիտութիւն
մերազնէից, խնդրեմք ներկայս Ձեր
պատուական հանդիսին մատակայ թեր-
թերուն մէջ հիւրընկալել բարեհաճեք:

78 սեպտ. 14 Մնամը
Կէտիկ-Բաշա ամենայն յարգանքօք
Ի Դիմաց Թաղ. խորհրդոյ
Ատենադպիր Ատենապետ
Մ. Սրբազան Գ. Մկրտիչ Կիրճեան
Փանոսեան

Ա. Զ. Դ.

Պէշիկթաշի Մաքրուհեան երկուս
վարժարանը Հայերէն Գաղղիերէն և
Տաճկերէն լեզուաց, թուաբանութեան
Աշխարհագրութեան և Բնական գի-
տութեանց դասատուներու, ինչպէս
նաև ուսումնասիրահի համար ալ կա-
ռավարչի և ծաղկոյնի համար մանկա-
վարժի մը պէտք ունենալով, յիշեալ
պաշտօնները ստանձնել ուղղող անձինք
կը հրաւիրուին ներկայանալ յառաջի-
կայ երկուշաբթի 18 սեպտեմբեր առա-
ւօտեան ժամը 2 1/2ին ի Խաղական
խորհրդարան:

Պէշիկթաշ 14 սեպտ. 1878

ՍԱԶԻԳ ԳԱԶԻՍԻ
ՅԱՐԱԳԵՅ Յ. ՓԱՆՈՍԵԱՆ
Գալաթատ Բէնչէմալի-բաղարնա
Ն. 41 Խալ խաղաճառ